

4.3.2. Ներքին զբոսաշրջություն¹

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների 2002թ. հունվար-սեպտեմբերին հանրապետության տարածքում տեղաբաշխված կոլեկտիվ և անհատական զբոսաշրջիկների տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 113458 զբոսաշրջիկներ (ՀՀ ռեզիդենտներ), որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 7.6%-ով :

Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

	2001 թ. հունվար-սեպտեմբեր	2002 թ. հունվար-սեպտեմբեր	(մարդ) Տեսակարար կշիռը (2002թ. 9 ամիս,%)
Ընդամենը զբոսաշրջիկներ²	105414	113458	100.0
որոնցից ըստ նպատակի՝			
գործնական	41062	40875	36.0
հանգստի և ժամանցի	19362	21128	18.6
բուժման	3265	6580	5.8
այլ	41725	44875	39,6

¹ Ներքին զբոսաշրջությանն առնչվում են այն զբոսաշրջիկները, որոնք ճանապարհորդում են իրենց իսկ երկրի (հիմնական բնակության վայրի) սահմաններում:

² Բերված տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկներին: